



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15 (306) 9.09.2016թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
192	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2016 թվականի մարտի 21-ի ՆՀ-19-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆՀ-205-Ն հրամանագիրը.....	2
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
193	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 520-Ն որոշումը.....	3
194	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 521-Ն որոշումը.....	4
195	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 522-Ն որոշումը.....	5
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
196	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2508/02/15թ. որոշումը.....	6

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ՆՀ-19-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահի առաջարկությունը՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2016 թվականի մարտի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» ՆՀ-19-Ն հրամանագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «մինչև 2016 թվականի սեպտեմբերի 10-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի նոյեմբերի 20-ը» բառերով:

2. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2016թ. սեպտեմբերի 6
Ստեփանակերտ
ՆՀ-205-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2016թ.

N 520-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Առաքելյան 1-ին փակուղի N 20/5 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0203 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2016թ.

N 521-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 859-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 859-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի «Կամո 33» բառերը փոխարինել «Կամո 4» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 սեպտեմբերի 2016թ.

N 522-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. 2016 թվականի սեպտեմբերի 12-ի աշխատանքային օրը տեղափոխել 2016 թվականի սեպտեմբերի 17-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2016թ. մայիսի 27-ի վճռով վերաքննիչ բողոքը մերժել է՝ Դատարանի 2016թ. փետրվարի 25-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:
Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական իրավունքի խախտմամբ և ենթակա է բեկանման, քանի որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 377-րդ և 447-րդ հոդվածները, անտեսել է պարտատիրոջ և երաշխավորի միջև երաշխավորության պայմանագրով ձեռք բերված փոխադարձ համաձայնությունը:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել երաշխավորության պայմանագիրը և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ երաշխավորի պատասխանատվության ծավալը սահմանող դրույթները: Վերաքննիչ դատարանը իրավաչափ է համարել այն, որ Դատարանն անտեսել է պարտատիրոջ և երաշխավորի միջև երաշխավորության պայմանագրով ձեռք բերված փոխադարձ համաձայնությունը և գտել, որ երաշխավորին տույժերից և համապատասխան մասով դատարան վճարվելիք պետական տուրքի վճարումից ազատելը հիմնավոր է:

Բողոք բերող անձը պնդում է, որ ստորադաս դատարանները դրանով իսկ թույլ են տվել դատական սխալ, որը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման և գտնում է, որ Գերագույն դատարանի որոշումն էական նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերողը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016թ. մայիսի 27-ի կայացրած որոշումը, այն փոփոխել և հայցը բավարարել ամբողջությամբ՝ անդրադառնալով նաև դատական ծախսերի հարցին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի /փոխատու/ և Ա.Հակոբյանի /փոխառու/ միջև 2014թ. նոյեմբերի 14-ին կնքվել է թիվ ԱՇ-353Ս.Ե/14 «Նպատակային փոխառության պայմանագիրը», որով փոխատուն փոխառուին անտոկոս, աշնանացանի նպատակով տրամադրում է 264.000 /երկու հարյուր վաթսուհինգ հազար/ ՀՀ դրամ, որը փոխառուն պարտավորվում է վերադարձնել մինչև 2015թ. օգոստոսի 1-ը:

2. Վերը նշված փոխառության պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետներում փոխառության գումարի չվճարման դեպքում փոխատուն փոխառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.02 տոկոսի չափով:

3. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը /փոխատու/, Ա.Հակոբյանի /փոխառու/ և ԼՂՀ Մարտունու շրջանի Մարտունի քաղաքային համայնքը /երաշխավոր/ 2014թ. նոյեմբերի 14-ին կնքել են թիվ 124 «Երաշխավորության պայմանագիրը», որով երաշխավորը պարտավորվում է փոխատուի կողմից փոխառուին 264.000 /երկու հարյուր վաթսուհինգ հազար/ ՀՀ դրամի չափով փոխառություն տրամադրելու դեպքում կրել համապարտ պատասխանատվություն փոխառուի փոխառության պարտավորության լրիվ կատարման համար:

4. Թիվ 124 «Երաշխավորության պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավոր է փոխառության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո փոխատուի առաջին իսկ պահանջով 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել փոխառուի կողմից վճարման ենթակա գումարը, հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև հատուցել փոխառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերն ու տուգանքները, ինչպես նաև առաջացած վնասները:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում բողոք բերող անձը բարձրացրել է հետևյալ իրավական հարցը.

-ի՞նչ ծավալով է պատասխանատվություն կրում երաշխավորը պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերը հատուցելիս:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքներն ու պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների կանխման, առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Նշված հոդվածը սահմանում է կարևոր քաղաքացիաիրավական սկզբունքի՝ պայմանագրի ազատության հասկացությունը, որն ավելի մանրամասն կարգավորում է ստացել նույն օրենսգրքի 437-րդ հոդվածով: Այդ պատճառով Գերագույն դատարանը պայմանագրի ազատության հարցը քննարկում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածների համատեքստում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կամովին ստանձնած պարտավորությամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե այդ հոդվածի 1-ին մասում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը:

Վերոգրյալից պարզ հետևում է, որ փոխառության պայմանագրով նախատեսված պարտավորության կատարման ժամկետի, պարտավորության ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում պատասխանատվության և այլ հարցերը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթների վերլուծության և գնահատման արդյունքում:

Սույն գործում առկա է ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի /փոխատու/ և Ա.Հակոբյանի /փոխառու/ միջև 2014թ. նոյեմբերի 14-ին կնքված թիվ ԱԾ-353Ս.Ե/14 «Նպատակային փոխառության պայմանագիրը», որով փոխատուն փոխառուին անտոկոս, աշխանացանի նպատակով տրամադրում է 264.000 /երկու հարյուր վաթսուհինգ հազար/ ՀՀ դրամ, որը փոխառուն պարտավորվում է վերադարձնել մինչև 2015թ. օգոստոսի 1-ը: Նույն պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետներում փոխառության գումարի չվճարման դեպքում փոխատուն փոխառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.02 տոկոսի չափով:

ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի /փոխատու/, Ա.Հակոբյանի /փոխառու/ և ԼՂՀ Մարտունու շրջանի Մարտունի քաղաքային համայնքը /երաշխավոր/ 2014թ. նոյեմբերի 14-ին կնքվել է թիվ 124 «Երաշխավորության պայմանագիրը», որով երաշխավորը պարտավորվում է փոխատուի կողմից փոխառուին 264.000 /երկու հարյուր վաթսուհինգ հազար/ ՀՀ դրամի չափով փոխառություն տրամադրելու դեպքում կրել համապարտ պատասխանատվություն փոխառուի փոխառության պարտավորության լրիվ կատարման համար: Նույն պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավոր է փոխառության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո փոխատուի առաջին իսկ պահանջով 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել փոխառուի կողմից վճարման ենթակա գումարը, հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև հատուցել

փոխառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերն ու տուգանքները, ինչպես նաև առաջացած վնասները:

Նշված երկու պայմանագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կողմերը, իրագործելով իրենց քաղաքացիական իրավունքները, փոխառության պայմանագրով սահմանել են նաև պատասխանատվությունը պարտավորության ոչ պատշաճ կատարման կամ չկատարման համար: Մասնավորապես, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետներում փոխառության գումարի չվճարման դեպքում, պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ փոխատուն փոխառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.02 տոկոսի չափով: Միաժամանակ երաշխավորության պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավոր է փոխառության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո փոխատուի առաջին իսկ պահանջով 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել փոխառուի կողմից վճարման ենթակա գումարը, հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև հատուցել փոխառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերն ու տուգանքները, ինչպես նաև առաջացած վնասները:

Գերագույն դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են ինչպես փոխառության պայմանագրով սահմանված փոխառուի կողմից պարտավորության չկատարման համար պատասխանատվության, այնպես էլ երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորի՝ որպես համապարտ պատասխանողի պատասխանատվության ծավալի հարցերը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով: Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրն ամրագրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնել ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Օրենսդիրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրել է նաև երաշխավորի պատասխանատվության ծավալը, սահմանելով, որ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Հաշվի առնելով վերոգրյալները, ինչպես նաև երաշխավորության ինստիտուտի մի շարք իրավանորմերի դիսպոզիտիվ կարգավորումը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի պատասխանատվության բնույթը և ծավալը հնարավոր է պարզել՝ երաշխավորության պայմանագրի դրույթները վերլուծելով և գնահատելով գործող իրավակարգավորման համատեքստում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «...2014թ. նոյեմբերի 14-ին Հիմնադրամի, Ա.Հակոբյանի և ԼՂՀ Մարտունու համայնքի միջև կնքված թիվ 128 երաշխավորության պայմանագիրն ամրագրել է երաշխավորի՝ ԼՂՀ Մարտունու համայնքի պարտավորությունների ծավալը, հետևաբար, այն պետք է դիտարկվի միայն տվյալ պայմանագրի սահմանած շրջանակներում: Երաշխավորության 1.1 կետի

համաձայն. «Երաշխավորը պարտավորվում է փոխատուի կողմից փոխառուին 264.000 /երկու հարյուր վաթսուներես հազար/ ՀՀ դրամի չափով փոխառություն տրամադրելու դեպքում կրել համապարտ պատասխանատվություն փոխառուի փոխառության պարտավորության լրիվ կատարման համար»: Այսինքն, ԼՂՇ Մարտունու համայնքը Հիմնադրամի առջև պատասխանատվություն է կրում հետևյալ ծավալով՝ փոխառությունը վերադարձնելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ Հիմնադրամի այլ վնասները հատուցելը: Անվիճելի է, որ նշվածների ցանկում տույժը որևէ կերպ չի արժարժվում, հետևաբար, այն երաշխավորից բռնագանձելու պահանջը Դատարանի կողմից մերժելը միանգամայն իրավաչափ է:»

Գերագույն դատարանը Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը համարում է անհիմն, քանի որ նշված երաշխավորության պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավոր է փոխառության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո փոխատուի առաջին իսկ պահանջով 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել փոխառուի կողմից վճարման ենթակա գումարը, հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև հատուցել փոխառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերն ու տուգանքները, ինչպես նաև առաջացած վնասները:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում երաշխավոր Մարտունու քաղաքային համայնքի պատասխանատվության սահմանափակումը ստորադաս դատարանների կողմից և գտնում է, որ երաշխավորի պատասխանատվության ծավալը սահմանափակվել է առանց ԼՂՇ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի հիման վրա երաշխավորության պայմանագրի դրույթները պատշաճ գնահատելու:

Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանը նշված հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը երաշխավորության պայմանագրի իրավակարգավորումների շրջանակներում պատշաճ չի գնահատել, ինչն ազդել է գործի ելքի վրա, ուստի վճռաբեկ բողոքը հիմնավոր է և հայրը ենթակա է բավարարման լրիվությամբ:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ԼՂՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի ա/ և բ/ ենթակետերի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես, պատասխանելով հետևյալ հարցերին՝ արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում: Եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Գերագույն դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների հետևությունները հիմնված չեն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի սույն գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի պատասխանողներից համապարտության կարգով ենթակա է գանձման 1.500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016թ. մայիսի 27-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել: Բողոքարկված մասով հայցը բավարարել:

Արմեն Կամոյի Հակոբյանից և ԼՂՀ Մարտունու քաղաքային համայնքից համապարտության կարգով հոգուտ ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գանձել փոխառության պայմանագրի 3.2 կետով 2015թ. դեկտեմբերի 19-ի դրությամբ հաշվարկված 5.174,4 /հինգ հազար հարյուր յոթանասունչորս հազար չորս տասնորդական/ ՀՀ դրամ, ինչպես նաև 2015թ. դեկտեմբերի 20-ից մինչև պարտավորության լրիվ կատարումը հաշվարկվելիք տույժերը:

Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Արմեն Կամոյի Հակոբյանից և ԼՂՀ Մարտունու քաղաքային համայնքից համապարտության կարգով հոգուտ ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գանձել 11.500 /տասնմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ